Գաֆէսճեան արվեստի կենտրոնը սկսում է «Տաբուլա ռազա» նախագիծը Կենտրոնի պատկերասրահ «Մեկում»: Նպատակը սրահի մաքուր, հարթ, դատարկ պատը օգտագործելն է Ինտերակտիվ ուսումնական կենտրոնի, գրադարանի տարածքի հետ հարաբերության մեջ՝ կյանքի կոչելով տարբեր ցուցադրություններ և նախագծեր (այդ թվում՝ փորձարարական): Տաբուլա ռազան, որ լատիներենից թարգմանաբար նշանակում է «հարթ, մաքուր տախտակ», դեռևս հին հունական փիլիսոփայությունից սերող տերմին է. այն կիրառվում է իմացաբանական և հոգեբանական առումով, երբ մարդու գիտակցությունը ծնվելու պահին մաքուր տախտակի հետ է համեմատվում: Այդ տեսանկյունից թանգարանային պատերը ևս «մաքուր տախտակներ» են, որոնք լրիվ անբիծ են մինչև նոր իմաստներով լցվելը. այնպես ինչպես և գիտելիք չունեցող մարդու գիտակցությունը: Այս համատեքստում շատ խորհրդանշական է սկսել «Տաբուլա ռազա» նախագիծը Լեո Լեո Վարդանյանի «Հետքեր» շարքով, որտեղ ոչ փոխաբերական, այլ իրական մաքուր սպիտակ տախտակը լիցքավորվում է նոր շերտերով ու իմաստներով:

Լեո Լեո Վարդանյանի հետքերը

Լեո Լեո Վարդանյանը աբստրակցիոնիստ նկարիչ է, ով աշխատում է տարբեր տեխնիկաներով, երբեմն նաև իր ստեղծագործություններում օգտագործելով մուլտիմեդիա գործիքակազմ: Հատկապես վերջին տարիների իր շարքերում նա ուսումնասիրում է տարբեր ֆիզիկական հարթությունների հարաբերությունները, տարբեր շերտերի գրավիտացիաներն ու վիբրացիաները (ինչպես ինքը՝ նկարիչն է դրանք անվանում): Արվեստագետի աշխատանքները անտեսանելի, անհաս, վերացական տարբեր երևույթների՝ երբեմն նուրբ, երբեմն ցցուն վիզուալ պատկերացումներն են: Լեո Լեո Վարդանյանի ձեռքերում կտավի կամ փայտի մակերևույթը ինքն իրենով կարող է լինել գլխավոր արտահայտչամիջոցը, ինչպես նրա «Ռելիեֆ» կամ «Հորիզոններ» շարքերում: Այդուհանդերձ, «Հետքեր»-ում արվեստագետը կարծես այդ մակերեսների հետ հարաբերությունը տեղափոխում է մեկ այլ հարթություն, որտեղ պատկերի ստեղծումն առավել ազատ ու կարծես անկառավարելի է, և հեղինակի ազդեցությունը, թվում է, թե աշխատանքի կերտման վրա հասցված է մինիմալի:

«Հետքեր» շարքի համար նկարիչը ստեղծել է այն պայմաններն ու միջավայրը, որում կրակի բոցերն ու շիթերը, կլանելով մանրաթելային տախտակի վրա փակցված ենթաշրջանակով կտավը, վերացական պատկերներ են կերտում: Ի սկզբանե որպես վիդեոարտի համար արված աշխատանք, այն առանձին կյանք ստացավ՝ դառնալով վերոնշյալ վիդեոարտի ածանցյալ, բայց ինքնուրույն ստեղծագործությունների շարք: Նկարչի յուրաքանչյուր ժեստ նրա մարմնի շարունակությունն է, որ եզակի, անկրկնների հետք է թողնում

«Հետքեր» շարք,
Մանրաթելային տախտակ, խառը տեխնիկա

Traces series
Mixed media on fiberboard

100 x 70 սմ/cm
2021

Արվեստագետի սեփականություն
Artist's collection

Կենսագրություն

ԼԵՈ ԼԵՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1971 ծնվել է Երևանում

1996 ավարտել է Երևանի պետական գեղարվեստի ակադեմիան, Գեղանկարի բաժին

1998 Դարձել է Նկարիչների միջազգային միության և Ռուսաստանի նկարիչների միության անդամ

2008 դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ

ԽՄԲԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 «Սև», Հայաստանի նկարիչների միություն, Երևան, Հայաստան

2021 «Մինչ ձեռակերպում», Հայաստանի նկարիչների միություն, Երևան, Հայաստան

2019 «Ազատության գույներ», Երևանի ժամանակից արվեստի թանգարան, Երևան, Հայաստան

2019 «Ծիածանի 8-րդ գույնը», Ալ-Քուվեյթ, Քուվեյթ

2018 «11. հայ ժամանակակից աբստրակտ արվեստի ընտրանի», Գաֆէսճեան արվեստի կենտրոն, Երևան, Հայաստան

2016 «Կենսահաստատման երկիր», Կալենց թանգարան, Երևան, Հայաստան

2016 «Հասսֆեստ» արվեստի և երաժշտության արվեստի միջազգային փառատոն, ՆՓԱԿ, Երևան, Հայաստան

2015 «Հայկական աբսրտակցիա. նուրբ կապը ավանդույթի հետ», Kulturhaus Berlin-Karlshorst, Բեռլին, Գերմանիա

2013 «Հայկական աբստրակցիա», Երևանի ժամանակից արվեստի թանգարան, Երևան, Հայաստան